# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/260

«15» Հոկտեմբերի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2019թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 45-Ա և 2019թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 46-Ա որոշումները :

Առդիր՝ 2 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե գ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» Հոկտեմբերի 2019 թվականի N 45-Ա

## ԱՐՄԵՆ ԼԱԴԻԿԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ձորագետ համայնքի «Հողամասն աճուրդով վաճառելու մասին» 2019թվականի հոկտեմբերի 08-ի թիվ 01 արձանագրությունը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Աճուրդում հաղթող ճանաչված Արմեն Լադիկի Մկրտումյանին օտարել՝ Ձորագետ համայնքի 06-065-0009-0005 ծածկագրում գտնվող 0.0399 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, /համաձայն սեփ. իրավունքի թիվ 12072019-06-0044 վկայականի/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամով:
2. Վերը նշված գումարը տասնօրյա ժամկետում վճարելուց հետո, Արմեն Լադիկի Մկրտումյանի հետ կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում Արմեն Լադիկի Մկրտումյանի միջոցների հաշվին:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 12

հ. Ձորագետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե գ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» Հոկտեմբերի 2019 թվականի N 46-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 21-ի N 22-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 25-Ն որոշումը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15

հ. Ձորագետ